

Պ. ԱՏՎԱՐԻ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ
ԱԶԳՈՅՆ ՀԱՐՑՈՒՄ



ՀԱՅԿԱԼՈՅԱ • 1937 • ՅԵՐԵՎԱՆ



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ



Ի. ԱՏՎԼԻՆ

323.1(47)

4

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ

10/95



*A II
6944*

**И. СТАЛИН
ОЧЕРЕДНЫЕ ЗАДАЧИ
ПАРТИИ В НАЦИОНАЛЬНОМ
ВОПРОСЕ**

Армпартиздат, Ереван, 1937

Նախքան կուսակցության՝ ազգային հարցի վերաբերյալ կոնկրետ հերթական խնդիրներին անմիջականորեն անցնելը, անհրաժեշտ է սահմանել միքանի նախադրյալ, առանց վորոնց անհնարին և ազգային հարցի լուծումը։ Այդ նախադրյալները վերաբերում են ազգերի յերեան դալու, ազգային ձնչման սաղմնավորվելու, պատմական դարդացման ընթացքում տեղի ունեցող ազգային ձնչման ձևերի և ապա՝ դարդացման զանազան շրջաններում ազգային հարցի լուծման ձևերի հարցին։

Այդպիսի յերեք շրջան կա։

Առաջին շրջանը՝ դա—Արևմուտքում Փեռդալիզմի լիկվիդացիայի և կապիտալիզմի հաղթության շրջանն է։ Մարդկանց վորպես ազգեր կազմավորվելը զուգադիպում է այդ շրջանին։ Յես նկատի ունեմ այնպիսի յերկիրներ, ինչպիսիք են Անդլիան (առանց իոլանդիայի), Ֆրանսիան, Իտալիան։ Արևմուտքում—Անդլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և մասամբ Գերմանիայում Փեռդալիզմի լիկվիդացիայի և մարդկանց վորպես ազգեր կազմավորվելու շրջանն ըստ ժամանակի ընդհանուր ու ամբողջական առումով զուգադիպեց կենտրոնացված պետությունների յերեան դալու շրջանին, վորի պատճառով ազգերն այնտեղ իրենց դարդացման ընթացքում պետական ձևեր եյին ընդունում։ Յեվ վորքանով վոր այդ պետությունների ներսում չկային ազգային ուրիշ փոքրիշատե նշանակելի խմբեր, այնքանով ել այնտեղ չկար նաև ազգային ձնչում։ Յեվրոպայի արևելքում, ընդհակառակը, աղդությունների դոյացման և Փեռդալական տրոհվածության վերացման պրոցեսն ըստ ժամանակի չզուգադիպեց կենտրոնացված պետությունների դոյացման պրոցեսին։ Յես նկատի ունեմ Հունգարիան, Ավստրիան, Ռուսաստանը։ Այս յերկիրներում կապիտալիստական դարդացում դեռևս չկար, այն, թերեւ, նոր երսաղմնավորվում, այնինչ, թուրքերի, մոնղոլների և Արևելքի այլ

ժողովուրդների արշավանքից պաշտպանվելու շահերը պահանջում ենին անհապաղ կազմել կենտրոնացված այնպիսի պետություններ, վորոնք ընդունակ լինելին զսպելու արշավանքի ուժը։ Յեվ վորովհետեւ Յեվրոպայի արևելքում կենտրոնացված պետությունների յերեան գալու պրոցեսն ավելի արագ եր ընթանում, քան մարդկանց վորպես աղդեր կազմավորվելու պրոցեսը, ուստի այնուեղ դոյացան խառն պետություններ, վորոնք բաղկացած Ելին իրեն աղդեր տակավին չկազմավորված, բայց արդեն իբրև ընդհանուր պետություն միավորված միքանի ժողովուրդներից։

Այսպիսով, առաջին շրջանը բնորոշվում է կասլիտալիոմի արշալույսին աղդությունների յերեան գալով, ըստվորում՝ Յեվրոպայի արևմուտքում ծնվում են զուտ-աղդային պետություններ՝ տուանց աղդային ճնշման, իսկ Արևելքում ծնվում են բաղմաղդ պետություններ՝ մի, ավելի զարդացած աղդի գլխավորությամբ և մնացած՝ ավելի պակաս զարդացած աղդերով, վորոնք յենթարկվում են տիրապետող աղդին քաղաքականապես, իսկ ապանակ անտեսապես։ Արևելքի տիր բաղմաղդ պետությունները յեղան այն աղդային ճնշման հայրենիքը, վորն առաջացրեց աղդային կոնֆլիկտներ, աղդային շարժումներ, աղդային հարց և այդ հարցի լուծման դանաղան յեղանակներ։

Աղդային ճնշման զարդացման և այդ ճնշման դեմ պայքարելու յեղանակների զարդացման յերկրորդ շրջանը զուդագիպում է խմալերիալիոմի յերեան գալու շրջանին, յերբ կասլիտալիոմը, վորոնելով վաճառահանման, հումքի, վառելիքի և եժան բանուժի շուկաներ, յերբ նա, պայքարելով կասլիտալի արտահանման և յերկաթուղային ու ծովային մեծ ճանապարհների աղահովման համար, դուրս ե թուչում աղդային պետության շրջանակներից և ընդարձակում է իր տերիտորիան՝ մոտիկ ու հեռու հարեանների հաշվին։ Այս յերկրորդ շրջանում հին աղդային պետությունները Արևմուտքում—Անդլիան, Իտալիան, Ֆրանսիան—դադարում են աղդային պետություններ լինելուց, այսինքն՝ նրանք, նոր տերիտորիաներ զավթելու հետեանքով, բաղմաղդ, դաղութային պետություններ են դառնում՝ դրանով իսկ հանդիսանալով հենց աղդային ու դագութային այն ճնշման ասպարեզը, վորը դեռ առաջ դոյություն ուներ Յեվրոպայի արևելքում։ Յեվրոպայի արեվելքում այդ շրջանը բնորոշվում է հպատակ աղդերի (չեխեր, յեհեր, ուկրաինացիներ) զարթոնքով և ուժեղացումով, վորոնք իմպերիալիտական պատերազմի հետեանքով հանդեցնում են հին բուրժուական բաղմաղդ պետությունների քայքայմանը և նոր

աղդային պետությունների գոյացմանը, —պետություններ, վորոնք ստրկական դրության մեջ են գտնվում այսպես կոչված մեծ պետությունների հանդես :

Յերբորդ շրջանը՝ դա—խորհրդային շրջանն է, կազիտալիզմի վոչնչացման ու աղդային ճնշման վերացման շրջանը, յերբ տիրապետով ու հպատակ աղդերի, դաղութների ու մետրոպոլիտայի հարցը անցնում է պատմական արխիպ., յերբ ՌՍՖՌ տերիտորիայի վրա մեր առջև բարձրանում են աղդություններ, վորոնք ունեն համասար իրավունքներ, դարդանալու համասար հնարավորություն, բայց իրենց տնտեսական, քաղաքական ու կուլտուրական հետամնացության պատճառով պահպաննել են պատմականորեն ժառանգած վորոշ անհամասարություն։ Աղդությունների այդ անհամասարության եյությունն այն է, վոր մենք, պատմական զարդացման չնորհիլ, անցյալից մի ժառանգություն ենք ստացել, բայց վորի մի աղդություն, այն է՝ վելիկուստականը, քաղաքական ու արդյունաբերական տեսակետից ավելի զարդած է դուրս յեկել, քան մյուս աղդությունները։ Մրանից Էլ փառտական անհամասարություն, վորը մի տարում չի կարող վերացվել, բայց վորը պետք է վերացվի՝ հետամնաց աղդերին տնտեսական, քաղաքական ու կուլտուրական ողնություն ցույց տալու միջոցով։

Ահա աղդային հարցի զարդացման յերեք շրջանը, վորը բառամականորեն անցել է մեր առջևով։ Առաջին յերկու շրջանները մի ընդհանուր դիմ ունեն։ Այդ դիմն այն է, վոր աղդությունները յերկու շրջանումն ել ճնշում ու ստրկացում են կրում, վորի պատճառով աղդային պայքարը ուժի մեջ է մնում, իսկ աղդային հարցը՝ չլուծված։ Բայց նրանց միջև տարբերություն ել կտ։ Դա այն է, վոր աղդային հարցն առաջին շրջանում դուրս չի զալիս առանձին բաղմազդ պետությունների շրջանակներից և ընդդրկում է միայն սակավաթիլ, գլխավորագես յելլրուստական աղդությունները, մինչդեռ յերկրորդ շրջանում աղդային հարցը ներպետական հարցից վերածվում է միջակետական հարցի—իմոլերիալիստական պետությունների միջև պատերազմ մզելու հարցի՝ իրավապակաս աղդություններն իրենց հպատակեցրած պահելու համար, Յեվրոպայի սահմաններից դուրս նոր ժողովուրդներ ու ցեղեր իրենց աղդեցությանը յենթարկելու համար։ Այսպիսով, աղդային հարցը, վորն առաջներում միայն կուլտուրական յերկիրներում նշանակություն ուներ, այս շրջանում կորցնում է իր

մեկուսացած բնույթը և միաձուլվում է դաղութների ընդհանուր հարցի հետ:

Ազգային հարցի դարդանալը և համադաշութային հարց դառնալը պատմական պատահականություն չեն: Այդ դարդացումը բացատրվում է, նախ, նրանով, վոր իմալերիալիստական պատերազմի ժամանակ պատերազմած պետությունների իմալերիալիստական խմբերն իրենք հարկադրված յեղան գիմել դաղութներին, վորտեղից նրանք մարդկային նյութ եյին քաղում, վորից զորքեր եյին ստեղծվում: Անկասկած է, վոր այս պրոցեսը, իմալերիալիստների կողմից դաղութների հետամնաց ժողովուրդներին անխուսափելիորեն դիմելու պրոցեսը, չեր կարող այդ ցեղերին ու ժողովուրդներին չարթնացնել աղատադրման համար, պայքարի համար: Այնուհետև՝ յերկրորդ գործոնը, վորը հանդեցրեց այն բանին, վոր աղջային հարցը լայնացավ, դարդացավ ու դարձավ համագաղութային մի հարց, վորն ընդդրկեց ամբողջ յերկրագունդը սկզբում աղատադրական շարժման կայծերով, ապա նաև բոցով, դա՝ իմալերիալիստական խմբերի՝ թյուրքիան բաժանելու և նրա պետական գոյությունը դադարեցնելու փորձն է: Թյուրքիան, վորը մուսուլմանական ժողովուրդների մեջ պետականության կողմից ամենազարդացած յերկիրն է, այդ թյուրքիան չեր կարող հաշտվել այսպիսի հեռանկարի հետ, նա պայքարի դրու բարձրացրեց և իմալերիալիզմի դեմ իր շուրջը համախմբեց Արևելքի ժողովուրդներին: Յերրորդ գործոնը՝ դա—Խորհրդային Ռուսաստանի յերեան դալն է, վորի պայքարն իմալերիալիզմի դեմ մի շարք հաջողություններ ունեցավ, և, բնականորեն, վորուրեց Արևելքի ճնշված ժողովուրդներին, արթնացրեց նրանց, պայքարի բարձրացրեց նրանց և դրանով իսկ հնարավորություն տվեց ճնշված աղդությունների ընդհանուր ճակատ ստեղծելու՝ իուլանդիայից մինչև Հնդկաստան:

Ահա այն բոլոր գործոնները, վորոնք աղջային ճնշման դարդացման յերկրորդ ստագիայում հանդեցրին այն բանին, վոր բուրժուական հասարակությունը վոչ միայն չլուծեց աղջային հարցը, վոչ միայն չհանդեցրեց խաղաղության՝ ժողովուրդների միջև, այլ, ընդհակառակը, աղջային պայքարի կայծը բորբոքելով՝ դարձրեց ճնշված ժողովուրդների, գաղութների ու կիսադաղութների պայքարի բոց՝ ընդդեմ համաշխարհային իմալերիալիզմի:

Ակներեւ ե՝ միակ ռեժիմը, վորն ընդունակ է աղջային հարցը լուծելու, այսինքն, այն ռեժիմը, վորն ընդունակ է զանազան

ժողովուրդների և ցեղերի խաղաղ համակեցությունն ու յեղբայրական համագործակցությունն ապահովող պայմաններ ստեղծելու, դա խորհրդային իշխանության ռեժիմն է, ալրուետարիատի դիկտատուրայի ռեժիմը:

Հաղիվ թե հարկ կա ապացուցելու, վոր կապիտալի տիրապետության, արտադրության միջոցների մասնավոր սեփականության տիրապետության և դասակարգերի դոյության պայմաններում չի կարող ապահովված լինել աղղությունների հավասարությունը, վոր, քանի դեռ դոյություն ունի կապիտալի իշխանությունը, քանի դեռ պայքար ե մղվում արտադրության միջոցներին տիրանալու համար, աղղությունների վոչ մի-հավասարություն չի կարող լինել, ինչպես և չի կարող լինել համագործակցություն աղղերի աշխատավորական զանդվածների միջև։ Պատմությունն ասում է, վոր աղղային անհավասարությունը վոչընչացնելու միակ յեղանակը, ճնշված և չճնշված ժողովուրդների աշխատավոր մասսաների յեղբայրական համագործակցության ռեժիմ հաստատելու միակ յեղանակը՝ դա—կապիտալիզմի վերցումը և խորհրդային հասարակակարգի հաստատումն է։

Այնուհետև, պատմությունը ցույց է տվել, թե, վորքան վոր տուանձին ժողովուրդներին հաջողվում ե աղատադրվել իրենց աղղային բուրժուաղիայից, ինչպես նաև «ոտար» բուրժուաղիայից, այսինքն, վորքան վոր նրանք իրենց մոտ խորհրդային հասարակակարգ են հաստատել, իմպերիալիզմի առկայության պայմաններում նրանք ի վիճակի չեն առանձին դոյություն ունենալու և հաջողությամբ սկաշտպանելու իրենց դոյությունը՝ առանց խորհրդային հարեան հանրապետությունների տնտեսական ու ուղղմական աջակցության։ Հունգարիայի որինակը պերճախոս կերպով ցույց է տալիս, վոր առանց խորհրդային հանրապետությունների պետական միության, առանց նրանց վորպես միասնական ուազմա-տնտեսական ուժ համախմբելուն անհնարին և հաստատուն մնալ համաշխարհային իմպերիալիզմի մնացած ուժերի հանդեպ վոչ ուազմական, վոչ ել տնտեսական ծակատներում։

Խորհրդային հանրապետությունների ֆեղերացիան պետական միության այն վորոնելի ձևն է, վորի կենդանի մարմնացումը ՌՍՖԽՀ-ն է։

Ահա՝ ընկերներ, այն նախադրյալները, վորոնց մասին յես ուզում եյի կանխապես այստեղ խոսել նրա համար, վորպեսզի հետո հիմնավորեմ աղղային հարցը ՌՍՖԽՀ շրջանակներում լու-

ծելու դորձում մեր կուսակցության կողմից վորոշ քայլեր անելու անհրաժեշտությունը:

Թեև խորհրդային ռեժիմի որով Ռուսաստանում և Ռուսաստանի հետ կապված հանրապետություններում այլեւս չկան վոչ իշխող, վոչ ել իրավագուրկ ազգություններ, վոչ մետրոպոլիս, վոչ ել գաղութներ, վոչ շահագործվողներ, վոչ ել շահագործողներ, բայց և այնպէս, ազգային հարց Ռուսաստանում այնուամենայնիվ գոյություն ունի: Ազգային հարցի եյությունը Ռուսաստանում այն է, վոր վոչնչացնենք ազգությունների այն հետամնացությունը (տնտեսական, քաղաքական, կուլտուրական), վորը մենք ժառանդել ենք անցյալից, վոր հետամնաց ժողովուրդներին հնարավորություն տանք կենտրոնական Ռուսաստանին հասնելու՝ թե պետական, թե կուլտուրական և թե տնտեսական տեսակետներից: Հին ռեժիմի որով ցարական իշխանությունը չեր աշխատում և չեր ել կարող աշխատել զարդացնելու պետականությունն Ռուսականացման, Աղբբեջանում, Թուրքեստանում և այլ ծայրամասերում. նա կովում եր ծայրամասերում պետականություն զարդացնելու դեմ, ինչպես նաև նրանց կուլտուրական զարդացման դեմ՝ ձգտելով բանությամբ ասխմիլացիայի յենթարկելու տեղական բնակչությունը: Ապա, հին պետությունը, կարիքածառերերն ու կապիտալիստները ժառանդություն են թողել այնպիսի հալածված ժողովուրդներ, ինչպիսիք են կիրտիլները, չեչենները, ոսերը, վորոնց հողերը ծառայել են Ռուսաստանի կաղակային և կուլակային տարրերի կոլոնիզացիայի համար: Այդ ժողովուրդները զատապարտված են յեղել չլոված տանջանքների ու մահացման: Այնուհետև, իշխող ազգություն հանդիսացած վելիկուուս ազգության գրությունը իր ազգեցության հետքերը թողել ենույնիսկ կոմունիստ-ռուսների վրա, վորոնք չեն կարողանում կամ չեն կամենում ավելի մոտենալ բնիլների աշխատավորական մասսաներին, հասկանալ նրանց կարիքները և ողնել նրանց, վոր դուրս դան հետամնացությունից ու անկուլտուրականությունից: Յես խոսում եմ ոռւս կոմունիստների այն սակավաթիվ խմբերի մասին, վորոնք, իրենց աշխատանքի մեջ անտեսելով կենցաղի ու կուլտուրայի առանձնահատկությունները ծայրամասերում՝ յերբեմն թեքվում են ոռւսական մեծապետական շովինիզմի կողմը: Ապա, ազգային ճնշում ապրած վոչ-ոռւս ազգությունների դրությունը նույնալես ազգեցություն և ունեցել կոմունիստ-բնիկների վրա, վորոնք յերբեմն չեն կարողանում տարբերել իրենց ժողովրդի աշխատավորական մասսաների

գաստիարկային շահերն այսպես կոչված «Համաժողովրդական» շահերից։ Յես խոսում եմ դեպի տեղական բնիկների նացիոնալիզմը յեղած այն թեքման մասին, վորը յերբեմն դիտվում է կոմունիստ բնիկների շարքերում և վորը Արևելքում արտահայտվում է պանխոլամիզմով, պանթյուրքիզմով։ Վերջապես, անհրաժեշտ է մահացումից փրկել կիրարիզներին, բաշկիրներին և լեռնային մի քանի ցեղեր, ապահովել նրանց համար անհրաժեշտ հողեր ի հաշիվ կուլտակ-կոլոնիզատորների։

Բնորոշելով կուսակցության այս հերթական խնդիրները՝ յես կուղեյի անցնել ընդհանուր խնդրին—մեր կոմունիստական քաղաքականությունը ծայրամասերում տնտեսական կացության այն հատուկ պայմաններին հարմարեցնելու խնդրին, վոր մենք ունենք ոլխավորապես Արևելքում։

Բանն այն է, վոր մի ամբողջ շարք, ոլխավորապես թյուրքական ժողովուրդներ—նրանք մոտ 30 միլիոն են—չեն անցել, չեն կարողացել անցնել արդյունաբերական կառիտալիզմի շրջանը, ուստի չունեն կամ դրեթե չունեն արդյունաբերական ոլրուկտարիատ, վորի պատճառով նրանք հարկադրված են տնտեսության նախնադարյան ձևերից անցնել խորհրդային տնտեսության ստադիոն՝ առանց արդյունաբերական կառիտալիզմի շրջանն ապրելու։ Այս ծանր, բայց բնավ վոչ անհնարին ողերացիոն կատարելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այդ ժողովուրդների տնտեսական կացության, նույնիսկ պատմական անցյալի, կենցաղի ու կուլտուրայի բոլոր առանձնահատկությունները։ Աներեակայելի ու վտանգավոր է այս ժողովուրդների տերիտորիան փոխազրել այն միջոցառումները, վորոնք ուժ ու նշանակություն են ունեցել այստեղ, Ռուսաստանի կենտրոնում։ Պարզ է, վոր ՌՍՖՀ տնտեսական քաղաքականությունը կիրառելիս անպայման ողետք է նկատի ունենալ տնտեսական կացության, դասակարգացման կառուցվածքի, պատմական անցյալի այն բոլոր առանձնահատկությունները, վոր մենք զտանք ծայրամասերում։ Ել յես չեմ խոսում այնպիսի անողատեհությունների վերացման մասին, ինչողիսին ե, որինակ, Պարժողկոմատի պահանջը՝ մասնարաշխման (разверстка) կարդով խողեր հանձնել կիրարիզիայում, վորոնց մուսուրման բնակչությունը յերբեք խող չի ունեցել։ Այս որինակից յերեսում է, թե մինչև վո՞ր աստիճան չեն ուղում հաշվի նըստել կենցաղի այն առանձնահատկությունների հետ, վորոնք առաջին իսկ ճանապարհորդի աչքին են ընկնում։

Ինձ հենց նոր մի տոմսակ (записка) տվին՝ խնդրելով պա-

տասխանել ընկ . Զիշերինի հոդվածին : Բնկերնե՛ր , յեռ դտնում
 եմ , վոր Զիշերինի հոդվածներից¹ , վորոնք յեռ ուշադրությամբ
 եմ կարդացել , բացի գրականադորձությունից (լiteraturինա) ,
 ուրիշ վոչինչ չնտացվեց : Այնուեղ չորս սխալ կամ թյուրիմացու-
 թյուն կա : Նախ , ընկ . Զիշերինը հակամետ և ժխտելու իմալերիա-
 լիստական պետությունների միջև յեղած հակասությունները՝
 դերադնահատելով իմալերիալիստների ինտերնացիոնալ միավո-
 րումը և աչքաթող անելով , թերագնահատելով իմալերիալիս-
 տական խմբերի ու պետությունների միջև յեղած այն ներքին
 հակասությունները , վորոնք գոյություն ունեն և ողատերազմ են
 ծնում (Ֆրանսիա , Ամերիկա , Անգլիա , Ճապոնիա և այլն) : Նա
 դերադնահատել և իմալերիալիստական վերնախավերի միավորման
 մոմենտը և թերագնահատել և այն հակասությունները , վոր կան
 այդ տրեստի ներսում : Իսկ մինչդեռ՝ այդ հակասությունները
 կան , և նրանց վրա յե խարսխվում Արտգործժողկոմատի գոր-
 ծունեյությունը : Ասլա՝ ընկ . Զիշերինը թույլ և տալիս յերկրորդ
 սիսալը : Նա թերագնահատում և այն հակասությունները , վոր
 գոյություն ունեն իշխող մեծ պետությունների և նորերս կազմ-
 ված աղղային պետությունների միջև (Զեխո-Ալովակիա , Լեհաս-
 տան , Ֆինլանդիա և այլն) , վորոնք ֆինանսավես և ռազմակա-
 նասվես յենթարկված են այդ մեծ պետություններին : Ընկ . Զի-
 շերինը միանգամայն աչքաթող և արել , վոր , չնայած աղղային
 այդ պետությունների յենթարկված լինելուն մեծ պետություն-
 ներին կամ , ավելի ճիշտը , չնորհիվ այդ յենթարկման՝ մեծ պե-
 տությունների և այդ պետությունների միջև կան հակասություն-
 ներ , վորոնք արտահայտվեցին , որինակ , Լեհաստանի , Եստո-
 նիայի և այլոց հետ ունեցած բանակցությունների ժամանակ :
 Արտգործժողկոմատի գոյության խմասոր հենց այն և , վոր այդ
 բոլոր հակասությունները հաշվի առնի , նրանց վրա խարսխվի ,
 խուսանավի (լավարություն) այս հակասությունների շրջանակնե-
 րում : Ամենաապեկցուցիչ կերպով ընկ . Զիշերինը թերագնահա-
 տել և այս մոմենտը : Ընկ . Զիշերինի յերբորդ սխալն այն է ,
 վոր նա չափազանց շատ և խոսում աղղային ինքնորոշման մասին ,
 վորը , իրոք , դարձել և իմալերիալիստների կողմից հարմարաբար
 ողտագործվող մի դատարկ լողունդ : Ընկ . Զիշերինը տարորի-
 նակ կերպով մոռացել և , վոր մենք այս լողունդին արդեն յերկու

¹ Խոսքը Զիշերինի այն հոդվածների մասին և , վորոնք պետեղվել են X
 Համազումարին նվիրված դիսկուսիան թերթիկներում : Խմբ . :

տարի յե, ինչ հրաժեշտ ենք տվել: Այդ լողունդը մեր ծրագրի մեջ այլևս չկա: Մեր ծրագրի մեջ խոսվում է վոչ թե ազգային ինքնորոշման մասին, —միանդամայն ճապաղ մի լողունդ, —այլ ավելի հստակաձույլ ու սլարդորոշ լողունդի մասին, —ժողովուրդների սկզբական անջատման իրավունքի մասին: Արանք յերկու տարրեր բաներ են: Ընկ. Զիչերինն իր հողվածների մեջ տարրինակ կերպով հաշվի չի առնում այս մոմենտը, վորի պատճառով նրա ըոլոր առարկությունները մի լողունդի դեմ, վորը ճապաղ ե դարձել, անդնդակ կրակոցի բնույթ են ստանում, վորովհետեւ վոչ յես իմ թեղիսներում, վոչ ել կուսակցության ծրադիրը վոչ մի խոսքով չեն հիշատակում «ինքնորոշման» մասին: Այնտեղ խոսվում ե միայն ժողովուրդների պետական անջատման իրավունքի մասին: Բայց գաղութներում բորբոքվող աղատագրական շարժման տվյալ մոմենտում մեզ համար այդ լողունդը հեղափոխական մի լողունդ ե հանդիսանում: Վորքան վոր խորհրդային սկետությունները՝ կամավոր սկզբունքներով միավորվում են իրեն Փեղերացիա, այդչափ ել անջատման իրավունքը ՌՍՖՀ մեջ մտնող ժողովուրդների իսկ կամքով մնում ե չողտագործված: Իսկ վորքան վոր մենք դործ ունենք այն գաղութների հետ, վորոնք գտնվում են Անդլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի, Ճապոնիայի ճանկերում, վորքան վոր մենք դործ ունենք այնպիսի ստորագրյալ յերկիրների հետ, ինչպիսիք են Արարիան, Միջազգետքը, Թյուրքիան, Հնդկաստանը, այսինքն՝ այն յերկիրների հետ, վորոնք Անտանտի գաղութներ են, այդչափ ել ժողովուրդների անջատման իրավունքի լողունդը հեղափոխական լողունդ ե, և հրաժարվել նրանից՝ նշանակում ե Անտանտին ձեռնտու բան անել: Զորքորդ թյուրիմացությունը՝ զաղործնական ցուցումների բացակայությունն ե ընկ. Զիչերինի հողվածներում: Հողվածներ գրելն, իհարկե, հեշտ ե, բայց դրանք «ընկ. Ստալինի թեղիսների դեմ» վերնազրելու համար պետք է տուաջադրել վորեւ լուրջ բան, թեկուղ գործնական հակառաջարկներ: Այնինչ՝ յես նրա հողվածներում չդտա դործնական վոչ մի առաջարկ, վորին արժենար ունկնդրել:

Յես վերջացնում եմ, ընկերներ: Մենք յեկանք հետեւյալ յեղրակացություններին: Բուրժուական հասարակությունը վոչ միայն անընդունակ յեղավ լուծելու ազդային հարցը, այլ, ընդհակառակը, այն «լուծելու» իր փորձերով նա ազդային հարցը բորբոքեց ու դարձրեց գաղութային հարց և իր դեմ ստեղծեց մի նոր ճակատ, վորը ձգվում ե իոլանդիայից մինչև Հնդկաստան: Միակ

սկետությունը, վորն ընդունակ է դնելու և լուծելու ազգային հարցը, դա այն պետությունն է, վորը հենված է արտադրության միջոցների ու դործիքների կուեկտիվ սեփականության վրա, Առրհրդային պետությունը: Առրհրդային ֆեղերատիվ պետության որով այլևս չկան վոչ ճնշված, վոչ ել իշխող ազգություններ, ազգային ճնշումը վոչնչացված է, բայց, հին բուրժուական հասարակակարդից ժառանգած՝ ավելի կուլտուրական ու պակաս կուլտուրական ազգությունների վաստական անհավասարության (կուլտուրական, տնտեսական, քաղաքական) պատճառով՝ ազգային հարցն ստանում է մի ձև, վորը պահանջում է մշակել այնպիսի միջոցառումներ, վորոնց նպատակն է հեշտացնել հետամնաց ժողովուրդների աշխատավորական մասսաների տնտեսական, քաղաքական ու կուլտուրական առաջադիմությունը, նրանց հնարավորություն տալ հասնելու առաջ անցած կենորոնական—պրոլետարական—Ռուսաստանին: Սրանից բղխում են դործնական այն առաջարկները, վորոնք կազմում են ազգային հարցի վերաբերմամբ իմ առաջարկած թեղիսների յերբորդ բաժնի բովանդակությունը¹: (Ծափահարություններ):

ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ

Ընկերնե՛ր: Ազգային հարցի վերաբերյալ դիսկուսիայում ամենաբնորոշը ավյալ համազումարի համար՝ դա—այն է, վոր մենք ազգային հարցի վերաբերյալ դեկլարացիաներից՝ Ռուսաստանի վարչական վերաբաժանմամբ անցել ենք հարցի դործնական դրմանը: Հոկտեմբերյան հեղափոխության սկզբին մենք սահմանափում ենք ժողովուրդների անջատման իրավունքների դեկլարացիայով: Հետամնաց ժողովուրդների աշխատավորական մասները Ռուսաստանի՝ պրոլետարիատի հետ մոտիկացնելու շահերից յելնելով՝ 1918 թ. և 1920 թ. մենք աշխատանք ենք կատարում Ռուսաստանի ըստ ազգային հատկանիշի վերաբաժանման յենթարկելու դժով: Իսկ ներկայումս մենք այս համազումարում զուտ դործնական հողի վրա հարց ենք դնում այն մասին, թե աշխատավորական մասսաների ու մանր-բուրժուական տարրերի նկատմամբ ինչպիսին պետք է լինի կուսակցության քաղաքականությունը Ռուսաստանի հետ կապված ավտոնոմ մարդերի և անկախ հանրապետությունների ներսում: Այս պատճառով ինձ

¹ Տե՛ս այս հրատարակության 26-րդ էջը: Խմբ.:

ասլշեցրեց ընկ. Զատոնսկու հայտարարությունն այն մասին, թե
ձեզ առաջարկած թեղիսները վերացական բնույթ են կրում. յես
ձեռքումս ունեմ նրա սեփական թեղիսները, վորոնք նա, չգիտես
ինչու, չառաջադրեց համադումարի ուշադրությանը, —թեղիսներ,
վորտեղ ինձ չհաջողվեց դանել դործնական բնույթի վոչ մի ա-
ռաջարկ, —բառացի վոչ մի, բացառությամբ, ասենք, մի առա-
ջարկի այն մասին, վոր «ԽՍԹԱՀ» անունը փոխարինվի «Արևելա-
յիկրոպական» բառով, իսկ «Ռուսաստանյան» բառը՝ «Ռուսական»
կամ «Վելիկոռուսական» բառով։ Այս թեղիսների մեջ դործնական
ուրիշ առաջարկներ յես չդտա:

Յես այժմ անցնում եմ հաջորդ հարցին։ Պետք է հայտարա-
րեմ, վոր յելույթ ունեցած պատվիրակներից յես ավելին եյի
սպասում։ Ռուսաստանում քսաներկու ծայրամաս են հաշվում,
ըստվորում՝ այդ ծայրամասերից վոմանց ուժոնապես շոշափել ե
արդյունաբերական զարդացումը, և նրանք արդյունաբերական
կողմից քիչ բանով են տարբերվում Ռուսաստանից, մյուսները
դեռ չեն անցել կապիտալիզմի ստադիան և արմատապես տար-
բերվում են կենտրոնական Ռուսաստանից, յերրորդները բոլորո-
վին ծեծկված են։ Թեղիսների մեջ անհնարին ե ընդդրկել ծայ-
րամասերի այս ամբողջ բազմազանությունը իր ամբողջ կոնկրե-
տությամբ։ Չի կարելի ոլահանջել, վոր ամբողջությամբ առած
վողջ կուսակցության համար նշանակություն ունեցող թեղիսները
կը են միայն թուրքեստանական, միայն աղբբեջանական կամ մի-
այն ուկրաինական բնույթ։ Անհրաժեշտ է բոլոր ծայրամասերի
համար բնորոշ ընդհանուր դժերը վերցնել և մտցնել թեղիսների
մեջ՝ վերանալով մասնավորություններից։ Թեղիսներ մշակելու
այլ մեթոդներ գոյություն չունեն բնության մեջ։ Անհրաժեշտ
է միքանի խմբի բաժանել վոչ-Վելիկոռուսական աղղությունները։
վոր և արված ե թեղիսներում։ Վոչ-ռուսական աղղությունները
մոտ 65·000·000 հողի յեն։ Այդ բոլոր՝ վոչ-ռուսական աղղու-
թյունների համար բնորոշ ընդհանուր գիծն այն ե, վոր նրանք,
իրենց պետականության զարդացման խմաստով վերցրած, հետ են
մնացել կենտրոնական Ռուսաստանից։ Մեր խնդիրն ե՝ գործ դնել
բոլոր ջանքերը նրա համար, վորպեսզի ողնենք այդ աղղու-
թյուններին, նրանց պրոլետարական, նրանց աշխատավորական
տարրերին՝ զարդացնելու իրենց մոտ մայրենի լեզվով խորհը-
ղային պետականությունը։ Այս ընդհանուրը նշված ե թեղիսնե-
րում, նրանց դործնական մասում։ Ապա, յեթե դնանք ծայրա-
մասերի առանձնահատկությունների հետազա կոնկրետացման ու-

դեռև, հարկ կլինի զատել վոչ-ռուսական աղբությունների մոտ
65·000·000 հոդի ընդհանուր դումարից մի 30 միլիոն թյուրքա-
կան բնակչությունը, վոր կասլիտալիզմի բովով չի անցել: Ընկ.
Միկոյանը երավացի չե՝ տսելով, թե Ադրբեջանը վորոշ կողմե-
րով բարձր է ռուսական պրովինցիաներից: Նա, ակներեորեն,
Բագուն չփոթում է Ադրբեջանի հետ: Բազուն աճել է վոչ թե
Ադրբեջանի ընդերքից, այլ վերևից կառուցված՝ Նորելի, Ռոտ-
շվիլի, Վիշառի և այլոց ջանքերով: Ինչ վերաբերում է բուն
Ադրբեջանին, ապա նա ամենահետամնաց նահապետական-ֆեոդա-
լական հարաբերությունների յերկիր է հանդիսանում: Ուստի՝
Ադրբեջանն ամբողջական առումով յես վերադրում եմ այն ծայ-
րամասերի խմբին, վորոնք կասլիտալիզմի բովով չեն անցել, և
վորոնց վերաբերմամբ անհրաժեշտ է կիրառել՝ այդ ծայրամա-
սերը խորհրդային տնտեսության հունը ներքաշելու յուրահատուկ
մեթոդներ: Այս մասին ասված է թեղիսներում: Ապա, կա մի
յերբորդ խումբ, վորն ընդդրկում է 8 կամ 10 միլիոնից վոչ ա-
վելի, — դա առավելապես անասնաբուժական ցեղերն են, վորտեղ
տուժական կենցաղը տակավին կենդանի յե, և վորոնք դեռ չեն
անցել հողադործական տնտեսության: Դրանք դլիսավորապես կիր-
դիզներն են, թուրքեստանի հյուսիսային մասը, բաշկիրները, չե-
չենները, ոոերը, ինդուշները: Ազգությունների այս խմբի վերա-
բերմամբ ամենից առաջ անհրաժեշտ է, վոր նրանք ապահովիկն
անհրաժեշտ հողով: Այստեղ կիրդիզներին խոսք չտվին, վիճա-
րանությունները դադարեցրին: Նրանք ավելի շատ բան կասեցին
այն մասին, թե ի՞նչ տանջանքներ են ապրում լեռնային Բաշ-
կիրիան, Կիրդիզիան ու Լեռնականները, վորոնք առանց հողի-
բնաջինջ են լինում: Բայց այն, ինչ այս առթիվ ասաց Սաֆա-
րովը, դա վերաբերում է միայն 8—10 միլիոն բնակչություն կազ-
մող մի խմբի: Ուստի միտք չունի ընկ. Սաֆարովի դործնական-
առաջարկները տարածել բոլոր ծայրամասների վրա, վորովհետեւ
վոչ-ռուսական աղղությունների մնացած մասի համար իսկ
նրանք մոտ 55 միլիոն են—այդ ուղղումները վոչ մի նշանակու-
թյուն չունեն: Ահա թե ինչու յես, չառարկելով առանձին կե-
տերի այն կոնկրետացման, լրացումների ու բարելավումների
դեմ, վոր մտցրեց Սաֆարովը և վորոնք վերաբերում են աղղու-
թյունների վորոշ խմբերին, պետք է ասեմ, վոր չի կարելի ունի-
վերսալացնել այդ ուղղումները: Ապա, յես պետք է դիտողու-
թյուն անեմ ընկ. Սաֆարովի մի ուղղման առթիվ: Նրա ուղղում—

ներից մեկի մեջ սպառել և մի ֆրազ՝ «աղղային-կուլտուրական ավտոնոմիայի» մասին.

«Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը՝—ասվում է տյնտեղ՝—մուսաստանի արևելյան ծայրամասերի ռազութային և կիսադաղութային ժողովուրդները, շնորհիվ իմաստերիալիստական քաղաքականության, դրկված են յեղել ամեն մի հնարավորությունից՝ սեփական աղղային-կուլտուրական ինքնորոշման, մայրենի լեզվով կրթվելու միջոցով հաղորդակից լինելու կապիտալիստական քաղաքականության նվաճումներին» և այլն:

Յես ալետք ե ասեմ, վոր այս ուղղումը յես չեմ կարող ընդունել, վորովհետեւ նրանից բունդիզմի հոտ ե փչում: Այդ բունդական ձևակերպում ե՝ աղղային-կուլտուրական ինքնորոշում: Մենք վազուց հրաժեշտ ենք տվել ինքնորոշման մշուշապատ լոգունդներին—դրանք վերականդնել հարկավոր չե: Ընդսմին՝ այս ամբողջ նախադասությունը բառերի ամենանբնական դուդակցություն ե:

Այսակեղ յես մի տոմսակ ունեմ այն մասին, վոր մենք, կոմունիստներս, իրր թե արհեստականորեն բելոռուսական աղղություն ենք արմատավորում: Դա ճիշտ չե, վորովհետեւ գոյություն ունի բելոռուսական աղղությունը, վորն ունի ուստի լեզվից տարրեր իր լեզուն, ուստի և բելոռուսական ժողովրդի կուլտուրան կարելի յե բարձրացնել միայն նրա մայրենի լեզվով: Հենց այսպիսի ճառեր հինգ տարի սրանից առաջ լավում եյին Ռւկրախնայի մասին, ուկրախնական աղղության մասին: Իսկ դեռ մոտ անցյալում ասում եյին, թե ուկրախնական հանրապետությունը և ուկրախնական աղղությունը դերմանացիների հորինվածքն են: Մինչդեռ, պարզ ե, վոր ուկրախնական աղղությունը գոյությունունի, և նրա կուլտուրան զարդացնելը կոմունիստների պարտականությունն ե: Զի կարելի պատմության դեմ դնալ: Պարզ ե, վոր, յեթե Ռւկրախնայի քաղաքներում մինչեւ այժմ տակավինուսական տարրերն են դերակշռում, ապա այդ քաղաքները ժամանակի ընթացքում անխուսափելիորեն կուկրախնացվեն: Միքառասուն տարի սրանից առաջ Ռիդան դերմանական քաղաք եր հանդիսանում, բայց վորովհետեւ քաղաքները գյուղերի հաշվին են աճում, իսկ դյուղն աղղության պահպանողն ե, ուստի Ռիդան այժմ զուտ լատիշական քաղաք ե: Մրանից մի հիսուն տարի առաջ Հունդարիայի բոլոր քաղաքները դերմանական բնույթ ունեցին, այժմ դրանք մաջարացել են: Նույն այս բանը կլինի Բեյո-



ոռւսիայի վերաբերմամբ, վորի քաղաքներում դեռևս զերակըռում
Են վոչ-բելոռուսները :

ՎԵՐՃԱԳՆԵԼՈՎ յեղափակման խոսքո՞ւ համադումարին առա-
ջարկում եմ ընտրել մի հանձնաժողով, վորի մեջ ոլետք և մտնեն
մարդերի ներկայացուցիչները՝ թեղիսների այն դործնական առա-
ջարկների հետապա կոնկրետացման համար, վորոնք հետաքրքրում
են մեր բոլոր ծայրամտուերին : (Ծափահարություններ) :

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ

Լճիկեր Ստալինի քեզիսները ՌԿ(Բ)Կ Խ համագումարի համար՝ հաստատված կուսակցության ԿԿ-ի կողմից (1921 թ.)

I. ԿԱՄԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿՐԴԸ ՑԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՃՆՇՈՒՄԸ

1. Ժամանակակից աղղերը վորոշ դարաշրջանի—բարձրացող կապիտալիզմի դարաշրջանի—արդասիք են: Ֆեոդալիզմի վերացման ու կապիտալիզմի զարդացման պրոցեսը դրա հետ մեկտեղ հանդիսանում է մարդկանց վորակես աղղեր կազմավորվելու որոշես: Անդլիացիները, ֆրանսացիները, գերմանացիները, իտալացիները վորակես աղղեր կազմավորվեցին ֆեոդալական տրոհվածությունը հաղթանակող կապիտալիզմի հաղթատար զարդացման որով:

2. Այնտեղ, վորտեղ աղղերի դոյացումն ընդհանուր և ամբողջական առումով՝ ըստ ժամանակի դուդադիոլել և կենտրոնացված պետությունների դոյացմանը, աղղերը, ընականաբար, ստացել են պետական ձև, դարձացել են վորակես ինքնուրույն բուժուական աղղային պետություններ: Այսպես ե յեղել Անդլիայում (առանց իուլանդիայի), ֆրանսիայում, իտալիայում: Յելլրոպայի տրեելքում, ընդհակառակը, կենտրոնացված պետությունների տրեելքում, վոր արադացվել ե ինքնապաշտպանության պահանջույանալը, վոր արադացվել ե ինքնապաշտպանության պահանջույանալը, մոնղոլների արշավանք և այլն), տեղի ունենալը (թյուրքերի, մոնղոլների արշավանք և այլն), տեղի ունենալըց առաջ, հետեաբար, աղղերի դոցավ ֆեոդալիզմը վերացնելուց առաջ, հետեաբար, աղղերի դոցավ ֆեոդալիզմը վերացնելուց առաջ: Այս պատճառով ել այստեղ աղղերը չզարդացմանալուց առաջ և կարող դարձանալ իրեն աղղային պետությունան և չելին ել կարող դարձանալ իրեն աղղային պետությունան և չելին ել կազմեցին՝ սովորաբար մի ուժեղ, տիրապետող աղղիցներ, այլ կազմեցին՝ սովորաբար մի ուժեղ, տիրապետող աղղիցներ, և միքանի թույլ, յենթակա աղղերից բաղկացած միքանի խառն,

բաղմաղդ բուրժուական պետություններ : Այլպիսիք և՛ Ավստրիան , Հռոմեարիան , Ռուսաստանը :

3 . Ֆրանսիայի և Իտալիայի նման ազգային պետությունները , վորոնք սկզբներում հենված են յեղել զլիսավորապես իրենց սեփական ազգային ուժերի վրա , ընդհանրապես առաջ՝ ազգային ճնշում չեն տեսել : Ի հակառակություն սրան՝ բաղմաղդ պետությունները , վորոնք կառուցվում են մյուս ազգերի նկատմամբ մի ազգէ , ավելի ճիշտը՝ նրա իշխող դասակարգի տիրապետության վրա , Հանգիսանում են ազգային ճնշման և ազգային շաբժումների սկզբնական հայրենիքն ու հիմնական տառարեզը : Գերիշխող ազգի շահերի և Հպատակ ազգերի շահերի հակասություններն այն հակասություններն են , առանց վորոնց լուծման անհնարին և բաղմաղդ պետության կայուն դոյությունը : Բուրժուական բաղմաղդ պետության վողքերդությունն այն է , վոր նա անզոր և լուծելու այդ հակասությունները , վոր ազգերը «Հավասարեցնելու» և ազգային փոքրամասնությունները «պաշտպանելու» նրա ամեն մի փորձը՝ մասնավոր սեփականությունը և դաստիարակային անհավասարությունը պահպանելու պայմաններում՝ սովորաբար վերջանում ենոր անհաջողությամբ , ազգային ընդհարումների նոր սրումով :

4 . Կապիտալիզմի հետագա աճումը Յելլուրայում , վաճառահանման նոր շուկաների պահանջը , հումքի ու վառելիքի վորոնումը , վերջապես , խմաներիալիզմի զարգացումը , կապիտալի արտահանումը և ծովային ու յերկաթուղային մեծ ճանապարհների առկահության անհրաժեշտությունը , մեկ կողմից հանվեցրին այն բանին , վոր ազգային հին պետությունները նոր տերիտորիաներ զայթեցին և դարձան բաղմաղդ (դադութային) պետությունների իրենց հատուկ ազգային ճնշումով ու ազգային ընդհարումներով (Անգլիա , Ֆրանսիա , Գերմանիա , Իտալիա) , մյուս կողմից—հին բաղմաղդ պետությունների գերիշխող ազգերի մեջ ուժեղացավ վոչ միայն ոչ հատական հին սահմանները պահելու , այլև այս վերջիններն ընդուրակելու , նոր (թույլ) ազգություններ՝ իշաշիլ հարեան պետությունների՝ իրենց հպատակեցնելու ձգտումը : Դրանով իսկ ազգային հարցն ընդլայնվեց և իրերի բուն իսկ ընթացքով , վերջիվերջո , միաձուրվեց դադութների ընդհանուր հարցի հետ , իսկ ազգային ճնշումը ներպետական հարց լինելուց վերածվեց միջակետական հարցի , խմաներիալիստական «մեծ» պետությունների պայքարի (ու պատերազմի) հարցի՝ թույլ , իրավապակաս ազգությունները հպատակեցնելու համար :

5. Իմայերիալիստական պատերազմը, վոր մինչև արմատները բաց արեց բուրժուական բաղմաղը պետությունների աղղային անհաշտելի հակասություններն ու ներքին անզորությունը, հանդեցրեց աղղային կոնֆլիկտների ծայրահեղ սրմանը՝ հաղթած դադութային պետությունների ներսում (Անդրիան, Ֆրանսիան, Իտալիան), պարտված հին բաղմաղը պետությունների (Ավստրիան, Հունգարիան, Ռուսաստանը 1917 թ.) կատարյալ քայլայմանը, և վերջապես, բուրժուական աղղային նոր պետությունների դոյցացմանը (Լեհաստանը, Չեխո-Սլովակիան, Հարավ-Սլավիան, Ֆինլանդիան, Վրաստանը, Հայաստանը և այլն) վորովես աղղային հարցի ամենից ամելի «արմատական» լուծմանը՝ բուրժուադիայի կողմից: Բայց աղղային ինքնուրույն նոր պետությունների դոյցացումը չհաստատեց և չեր ել կարող հաստատել աղղությունների խաղաղ համակեցություն, չվերացրեց և չեր ել կարող վերացնել վոչ աղղային անհավասարությունը, վոչ աղղային ճնշումը, վորովհետեւ նոր աղղային պետությունները, վորոնք հենվում են մասնավոր սեփականության ու դասակարգային անհավասարության վրա, չեն կարող դոյցություն ունենալ՝ ա) առանց իրենց աղղային փոքրամասնություններին ճնշելու (որինակ՝ Լեհաստանը, վոր ճնշում և բելոռուսներին, հրեաներին, լիտվացիներին, ուկրաինացիներին. Վրաստանը, վոր ճնշում և ոսերին, արխաղներին, հայերին. Հարավ-Սլավիան, վոր ճնշում և խորվաթներին, բոսնիացիներին և այլն). բ) առանց իրենց տերիտորիան ի հաշիվ հարեւանների ընդարձակելու, վորը կոնֆլիկտներ ու ուստերազմներ և առաջացնում (Լեհաստանը՝ Լիտվայի, Ուկրաինայի, Ռուսաստանի գեմ. Հարավ-Սլավիան՝ Բուլղարիայի գեմ. Վրաստանը՝ Հայաստանի, Թյուրքիայի գեմ և այլն). դ) առանց իմայերիալիստական «մեծ» պետություններին ֆինանսական, տնտեսական ու ռազմական տեսակետից յևնթարկվելու:

6. Այսպիսով, հետագաներազմյան շրջանը բաց ե անում աղղային թշնամանքի, անհավասարության, ճնշման, կոնֆլիկտների, պատերազմների, քաղաքակիրթ յերկիրների աղղերի կողմից ինչպես միմյանց նկատմամբ, այնպես ել իրավապակաս ժողովուրդների նկատմամբ իմայերիալիստական գաղանություններ դորձադրելու անմիտիթար պատկեր. մի կողմից՝ միքանի «մեծ» պետություններ, վորոնք ճնշում և շահագործում են կախյալ և «անկախ» (փաստորեն միանդամայն կախյալ) աղղային պետությունների ամբողջ մասսան և այդ պետությունների պայքարը միմյանց դեմ՝

աղղային պետությունները շահագործելու մենաշնորհի համար-
մյուս կողմից՝ թե կախյալ և թե անկախ աղղային պետություն-
ների պայքարը «մեծ» պետությունների անտանելի ճնշման դեմ.
աղղային պետությունների պայքարը միմյանց դեմ՝ իրենց աղ-
ղային տերիտորիան ընդարձակելու համար. աղղային պետու-
թյունների պայքարը, յուրաքանչյուրին առանձին վերցրած,
իրենց ճնշված աղղային փոքրամասնությունների դեմ. վերջո-
ւես, դադութների աղատազրական շարժման ուժեղացումը «մեծ»
պետությունների դեմ և աղղային կոնֆլիկտների սրումն ինչպես
այդ պետությունների ներսում, այնպես եւ աղղային այն պետու-
թյունների ներսում, վորոնք իրենց կազմի մեջ ունեն, իրքի կա-
նոն, մի շարք աղղային փոքրամասնություններ։ Այս և «աշխար-
հի պատկերը», վոր ժառանդություն և թողել իմպերիալիստական
պատերազմը։

Բուրժուական հասարակությունն աղղային հարցի լուծման
դորժում կատարյալ սնանկ դուրս յեկալ։

II. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳԸ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Յեթե մասնավոր սեփականությունն ու կապիտալը մարդ-
կանց անխուսափելիորեն անջատում են իրարից, աղղային յերկ-
պառակություն են բորբոքում և ուժեղացնում են աղղային ճըն-
շումը, ապա կոլեկտիվ սեփականությունը և աշխատանքը նույն-
քան անխուսափելի կերպով մարդկանց մոտեցնում են իրար,
խարխլում են աղղային յերկպառակության հիմքը, վոչնչացնում
են աղղային ճնշումը։ Կապիտալիզմի դոյությունն առանց աղղա-
յին ճնշման նույնքան և աներեակայելի, վորքան վոր աներեա-
կայելի յէ սոցիալիզմի գոյությունն առանց ճնշված աղղերի աղա-
տազրության, առանց աղղային աղատության։ Շովինիզմն ու աղ-
ղային պայքարն անխուսափելի, անխափանելի յեն, քանի գեռ
դյուղացիությունը (և առհասարակ մանր բուրժուազիան), վոր
լեցուն և նացիոնալիստական նախավաշարմունքներով, բուրժուա-
զիայի հետեւից և դնում և, ընդհակառակը, աղղային խաղաղու-
թյունն ու աղղային աղատությունն ապահովված կարելի յէ հա-
մարել, յեթե դյուղացիությունը սլրուետարիատի հետեւից և
դնում, այսինքն՝ յեթե ապահովված է սլրուետարիատի դիկտա-
տուրան։ Ուստի՝ Խորհուրդների հաղթությունը և սլրուետարիատի
դիկտատուրայի հաստատումը հանդիսանում են աղղային ճնշումը
վոչնչացնելու, աղղային հավասարություն հաստատելու, աղղա-

յԵ՞ն փոքրամասնությունների երավունքներն ասլահովելու հիմնական սլայմանը :

2. Խորհրդային հեղափոխության փորձն ամրողապես հաստատում և այս դրույթը : Խորհրդային հասարակակարդի հաստատումը Ծուսաստանում և աղղերի պետական անջատման իրավունքի հռչակումը շուրջ տվին Ծուսաստանի աղղությունների աշխատավորական մասսաների միջև յեղած հարաբերությունները, խարիսխեցին աղղային հին թշնամանքը, զրկեցին հիմքից աղղային ճնշումը և դեպի ոռւսական բանվորները նվաճեցին նրանց այլազգի յեղբայրակիցների վստահությունը վոչ միայն Ծուսաստանում, այլև Յեղբողայում ու Ասխայում, այս վստահությունը հասցըին խանդավառության, ընդհանուր դործի համար մարտընչելու պատրաստակամության : Խորհրդային հանրապետությունների կազմվելն Աղբբեջանում, Հայաստանում ունեցավ նույն այդ հետեանքները՝ վոչնչացնելով աղղային ընդհարումները և վերացնելով թյուրք ու հայ և հայ ու աղբբեջանցի աշխատավոր մասսաների միջև յեղած «ղարավոր» թշնամանքը : Նույն այդ բանը ոլետք և ասել՝ Հունդարիայում, Բալարիայում, Թինլանդիայում, Լատվիայում խորհուրդների ունեցած ժամանակավոր հաղթության առթիվ : Մյուս կողմից, վստահ կարելի յէ ասել, վոր ոռոսական բանվորներն անկարող կլինեցին հաղթել կոլչակին ու Դենիկինին, իսկ Աղբբեջանի ու Հայաստանի հանրապետությունները չելին կարող վոտքի կանգնել՝ առանց իրենց տանի աղղային թշնամանքն ու աղղային ճնշումը վերացնելու, առանց Արևմուտքի ու Արևելքի աղղությունների աշխատավոր մասսաների վստահությունն ու խանդավառությունն իրենց կողմն ունենալու : Խորհրդային հանրապետությունների ամրապնդումը և աղղային ճնշման վոչնչացումը հանդիսանում են իմպերիալիստական սուբրեկացումից աշխատավորությունն աղատագրելու միենույն պրոցեսի յերկու կողմը :

3. Բայց խորհրդային՝ թեկուղ և ծավալով ամենաանշան հանրապետությունների գոյությունը մահացու սպառնալիք և իմպերիալիզմի համար : Այդ սպառնալիքը վոչ միայն այն և, վոր խորհրդային հանրապետությունները, իմպերիալիզմից խղելով իրենց կապերը, դաղութներ ու կիսազաղութներ լինելուց դարձան իրոք ինքնուրույն պետություններ և դրանով իսկ իմպերիալիստներին զրկեցին տերիտորիայի մի ավելորդ պատառից և ավելորդ յեկամուտներից, այլև ամենից առաջ այն, վոր խորհրդային հանրապետությունների բուն իսկ դոյությունը, այս հան-

բազետությունների յուրաքանչյուր քայլը՝ բուրժուազիան ճնշելու և պրոլետարիատի դիկտատուրան ամրապնդելու ճանապարհին՝ մեծաղույն աղիտացիա յե կապիտալիզմի ու խմակերիալիզմի դեմ, աղիտացիա յե՝ կախյալ յերկիրներն իմակերիալիստական ստրկացումից աղատավրելու համար, մի անհաղթահարելի դործոն և՝ կապիտալիզմը նրա բոլոր տեսակներով քայլայելու և կաղմալու ծելու համար։ Այստեղից՝ խմակերիալիստական «մեծ» պետությունների կողմից խորհրդային հանրապետությունների դեմ սկայքարելու անխուսափելիությունը, «մեծ» պետությունների ձգտումը՝ վոչնչացնելու այդ հանրապետությունները։ Խորհրդային Ռուսաստանի դեմ «մեծ» պետությունների սկայքարելու սկատմությունը—պետություններ, վորոնք Խորհրդային Ռուսաստանի դեմ ևն հանում ծայրամասային բուրժուական մի կառավարությունը մյուսի հետեւից, հակահեղափոխական դեներալների մի խումբը՝ մյուսի հետեւից, վորոնք հոգածությամբ բլոկադայի յեն յենթարկում Խորհրդային Ռուսաստանը և առհասարկ աշխատում են նրան տնտեսավես մեկուսացնել,—պերճախոռներով ասում և այն մասին, վոր միջազգային տվյալ հարաբերությունների պարագայում, կապիտալիստական շրջապատման պայմաններում, առանձին վերցրած՝ խորհրդային վոչ մի հանրապետություն չի կարող իրեն ապահովված համարել համաշխարհային իմակերիալիզմի կողմից տնտեսական ուժասովառման ու ռազմական ջախջախման յենթարկվելուց։

4. Ուստի և՝ անկայուն, անհաստատուն և խորհրդային առանձին հանրապետությունների մեկուսացած գոյությունը՝ կապիտալիստական պետությունների կողմից նրանց գոյության դեմ յեղած սպառնալիքի սլատնառով։ Խորհրդային հանրապետությունների սլաշտպանության ընդհանուր շահերը՝ մի կողմից, պատերազմի քայլայած արտադրողական ուժերի վերականգնումը՝ մյուս կողմից, հացալակաս խորհրդային հանրապետություններին հացաշատ հանրապետությունների կողմից անհրաժեշտ պարենային ողնություն ցույց տալը՝ յերբորդ կողմից, — հրամայաբար թելադրում են առանձին խորհրդային հանրապետությունների ուկանական միություն կութել վրանես իմակերիալիստական սորկացումից և աղղային ճնշումից վրկվելու միակ ուղի։ «Իրենց» և «ոտար» բուրժուազիայից աղատած աղղային խորհրդային հանրապետությունները կարող են իրենց գոյությունը պաշտպանել և հաղթել իմակերիալիզմի միացյալ ուժերին՝ միայն

միավորվելով վորակս մի սերտ պետական միություն, կամ թէ
չե՝ նրանք բնավ չեն հաղթի:

5. Խորհրդային հանրապետությունների ֆեդերացիան, հիմն-
ված ռազմական ու տնտեսական գործի ընդհանրության վրա՝
հանդիսանում ե պետական միության այն ընդհանուր ձևը, վորը
հնարավորություն ե տալիս. ա) ապահովելու ինչպես առանձին
հանրապետությունների, այնպես և ամբողջովին վերցրած՝ ֆե-
դերացիայի ամբողջությունն ու տնտեսական զարդացումը.
բ) ընդգրկելու զարդացման տարբեր աստիճանների վրա կանդնած
զանազան ազգերի ու ժողովուրդների կենցաղի, կուլտուրայի և
տնտեսական կացության ամբողջ բազմազանությունը, և համա-
պատասխան սրան՝ կիրառել ֆեդերացիայի այս կամ այն ձևը.
դ) կարգի դնելու այն ազգերի ու ժողովուրդների խաղաղ հա-
մակեցությունն ու յեղբայրական համագործակցությունը, վո-
րոնք այս կամ այն կերպ իրենց բախտը կապել են ֆեդերացիայի
բախտի հետ։ Ուուսաստանի փորձը, —վորտեղ կիրավում են ֆե-
դերացիայի զանազան ձևերը, սկսած խորհրդային ավտոնոմիայի
վրա հիմնված ֆեդերացիայից (Կիրդիղիան, Բաշկիրիան, Թա-
թարիան, Լեռնցիները, Դաղստանը), մինչեւ անկախ խորհրդային
հանրապետությունների հետ պայմանագրական հարաբերություն-
ների վրա հիմնված ֆեդերացիան (Ուկրաինան, Աղըբեջանը), և
վորտեղ թույլ են տրվում այս ձևերի միջև միջակա աստիճան-
ներ (Թուրքեստանը, Բելոռուսիան), —ամբողջապես հաստատեց
ֆեդերացիայի՝ իրեւ խորհրդային հանրապետությունների պե-
տական միության ընդհանուր ձևի՝ ամբողջ նորատակահարմարու-
թյունն ու ճկունությունը։

6. Բայց ֆեդերացիան կարող ե ամուր լինել, իսկ ֆեդերա-
ցիայի արդյունքները՝ իրական միայն այն դեպքում, յեթե ֆե-
դերացիան հենվում ե իր մեջ մտնող յերկիրների վոխագարձ
վստահության ու կամավոր համաձայնության վրա։ Յեթե
ՌՍՖՀ աշխարհումս միակ յերկիրն ե, վորտեղ հաջողվել ե մի
ամբողջ շարք ազգերի ու ժողովուրդների խաղաղ համակեցու-
թյան և յեղբայրական համագործակցության փորձը, ապա դա
այն պատճեռով ե, վոր այսուղ չկան վոչ տիրապետողներ, վոչ
ել սպարագրայներ, վոչ մետրոպոլիտ, վոչ ել դադութներ, վոչ
իմալերիալիզմ, վոչ ել ազգային ճնշում, —այսուղ ֆեդերացիան
հաստատված և դանական ազգերի աշխատավոր մասսաների վո-
խագարձ վստահության և դեսպի միությունն ունեցած կամավոր

ձգտման վրա : Ֆեղերացիայի այս կամավոր բնույթն անողատճառ պետք է պահպանվի նաև առաջիկայում , վորովհետեւ միայն այսպիսի Փեղերացիան է , վոր կարող է դառնալ անցման ձև դեպի բոլոր յերկիրների աշխատավորության այն բարձրագույն միասնությունը համաշխարհային միասնական տնտեսության մեջ , վորի անհրաժեշտությունը քանի զնում ավելի ու ավելի շոշափելի յէ դառնում :

III. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. ՌՍՖՌ և նրա հետ կապված խորհրդային հանրապետությունները մոտ 140 միլիոն բնակչություն են՝ ներկայացնում : Նրանցից վոչ-վելիկոսուսները մոտ 65 միլիոն են (ուկրաինացիները , բելոռուսները , կիրգիզները , ուզբեկները , թուրքմենները , տաջիկները , աղրբեջանցիները , Պովոլժյեյի թաթարները , Ղրիմի թաթարները , բուխարացիները , խիվացիները , բաշկիրները , հայերը , չեչենները , կարարդացիները , ոսերը , չերքեզները , ինդուչները , կարաչայցիները , բալկարները¹ , կարմիկները , կարելները , ավարցիները , դարդինները , կաղիկումուխները , կյուրինները , կումիկները² , մարիները , չուվաչները , վույակիները , Պովոլժյեյի գերմանացիները , բուրյատները , յակուտները և այլն) : Ճարիպմի քաղաքականությունը , կալվածատերերի ու բուրժուազիայի քաղաքականությունն այդ ժողովուրդների նկատմամբ այն է յիշել , վոր սպանի նրանց մեջ ամեն մի պետականության սաղմեր , ինդի (կօլեչի) նրանց կուլտուրան , ձնչի լեզուն , տղիտության մեջ պահի նրանց և , վերջապես , ըստ կարելույն նրանց սուսացնի : Այդպիսի քաղաքականության արդյունքներն են՝ այդ ժողովուրդների անզարդացածությունն ու քողաքական հետամնացությունը :

Այժմ , յերբ կալվածատերերն ու բուրժուազիան տապարված են , իսկ ժողովրդական մասսաները թորհրդային իշխանություն են հոչակել նաև այդ յերկիրներում , կուսակցության խնդիրն է՝ ողնել վոչ-վելիկոսուս ժողովուրդների աշխատավորական մասսաներին՝ հասնելու առաջ անցած կենտրոնական իրուսատանին ,

¹ Վերջին յոթը ժողովուրդները միտվարվում են վորովես «Լեռնականներ» խումբ :

² Վերջին հինգ ժողովուրդները միավորվում են վորովես «Դաղստանցիներ» խումբ :

ողնել նըանց , վորպեսղի՝ ա) իրենց մոտ զարդացնեն ու ամբաղըն-
դեն խորհրդային պետականությունը այն ձեւերով , վորոնք հա-
մապատասխան են այդ ժողովուրդների ազգային նկարագրին ,
բ) իրենց մոտ կազմակերպեն տեղական բնակչության կենցաղն ու
հողերանությունն իմացող տեղացիներից կազմված՝ մայրենի
լեզվով գործող դատարան , աղմինիստրացիա , տնտեսության որ-
դաններ , իշխանության որդաններ , գ) իրենց մոտ մայրենի լեզ-
վով զարդացնեն մամուլ , դալրոց , թատրոն , ակումբային զործը և
առհասարակ՝ կուլտուր-լուսավորական հիմնարկներ :

2. ՅԵթե 65 միլիոն վոչ-վելիկոուս բնակչությունից հա-
նենք Ռէկրաինան , Բէլոռուսիան , Ադրբէջանի անհան մասը , Հա-
յաստանը , վորոնք այս կամ այն աստիճանով անցել են արդյու-
նարերական կապիտալիզմի շրջանը , առա մնում ե մոտ 30 մի-
լիոն՝ առավելապես թյուրքական բնակչություն (Թուրքեստան ,
Ադրբէջանի մեծ մասը , Դաղստանը , լեռնականները , թաթարնե-
րը , բաշկիրները , կիրդիղները և ուրիշները) , վորոնք չեն կարո-
ղացել անցնել կապիտալիստական զարդացման բովով , չունեն կոմ-
որեթե չունեն իրենց արդյունարերական պրոլետարիատը , մեծ
մասամբ սկահալանել են անասնաբուծական տնտեսությունն ու նա-
հապետական-տոհմային կենցաղը (Կիրդիղիան , Բաշկիրիան , Հյու-
սիսային Կովկասը) , կամ կիսակապիտալիստական-կիսաֆեուլա-
լական կենցաղի նախնադարյան ձեւերից դեմք չեն անցել (Ադրբէ-
ջանը , Ղրիմը և այլն) , բայց արդեն ներդրավված են խորհրդային
զարդացման բնդհանուր հունի մեջ :

Կուսակցության խնդիրն այս ժողովուրդների աշխատավո-
րական մասսաների վերաբերմամբ (բացի 1 կետում նշված խորհրից) այն ե , վոր ողնի նրանց վերացնելու նահապետական-ֆեու-
լալական հարաբերությունների մնացուկները և հազորդակից
դառնայու խորհրդային տնտեսության շինարարությանը՝ գյու-
ղացիական աշխատավորական խորհուրդների հիման վրա , այդ
ժողովուրդների մեջ կոմունիստական այնպիսի ամբակուր կադ-
մակերպություններ ստեղծելու միջոցով , վորոնք ընդունակ լինե-
ցին ողտագործելու ոռւսական բանվորների ու դյուղացիների
խորհրդային-տնտեսական շինարարության վերաբերյալ փորձը և
իրենց շինարարական աշխատանքում կարողանային դրա հետ
մեկտեղ հաշվի առնել յուրաքանչյուր տվյալ ժողովրդի տնտեսա-
կան կոնկրետ իրադրության , դասակարգային կառուցվածքի ,
կուլտուրայի ու կենցաղի բոլոր առանձնահատկությունները՝ ա-

ուանց մեխանիկորեն տեղափոխելու կենտրոնական թուսաստանի տնտեսական միջոցառումները, վորոնք պիտանի յեն տնտեսական դարդացման այլ, ավելի բարձր աստիճանի համար:

3. Յեթե 30 միլիոն՝ առավելագես թյուրքական՝ բնակչությունից հանենք Աղբբեջանը, թուրքեստանի մեծ մասը, թաթարներին (Պովոլժյեյի ու Ղրիմի), Բուխարան, Խիվան, Դաղլստանը, լեռնականների մի մասը (կաբարդացիներին, չերքեղներին, բալկարներին) և միքանի այլ ազգություններ, վորոնք արդեն նստակյաց են դարձել և ամուր կերպով հաստատվել են վորոշերի տերիտորիայի վրա, ապա մնում են մոտ 10 միլիոն կիրղիզներ, բաշկիրներ, չեչեններ, ռուս, ինդուչներ, վորոնց հողերը մինչեւ վերջին ժամանակներս կոլոնիզացիայի որյեկտ ենին ծառայում ուստ դաղթականների կողմից, վորոնք արդեն կարողացել են խլել վերոհիշյալներից վարելու լավագույն հողամասերը և նրանց ոիստեմատիկորեն արտամղում են անպառող անապատները: Յարիզմի քաղաքականությունը, կալվածատերերի ու բուրժուազիայի քաղաքականությունն այն է յեղել, վոր այս շրջաններում վորքան կարելի յե շատ կուլակային տարրեր արժատավորեն ուստ դյուդացիներից ու կազակներից՝ դարձնելով այս վերջիններիս մեծապետական ձգտումների վստահելի հենարան: Այս քաղաքականության հետեանքը՝ յերկրի խորքերը քշվող տեղացիների (կիրղիզներ, բաշկիրներ) աստիճանական բնաջնջվելն է:

Կուսակցության խնդիրն այս ժողովուրդների աշխատավորական մասսաների վերաբերմամբ (բացի 1 և 2 կետերում հիշատակված խնդիրներից) այն է, վոր միավորի նրանց ջանքերը տեղական ուստ բնակչության աշխատավոր մասսաների ջանքերի հետ՝ ընդհանրապես կուլակությունից, մանավանդ վելիկոուսական գիշատիչ կուլակությունից ազատվելու համար մղվող պարագաւում, վոր բոլոր ուժերով ու բոլոր միջոցներով ողնի նրանց՝ իրենց ուսերից թոթափելու կուլակ-կոլոնիզատորներին և, այսպիսով, նրանց ապահովի մարդկային դոյության համար անհրաժեշտ պիտանի հողերով:

4. Բացի վերը հիշատակված ազգերից ու ժողովուրդներից, վորոնք գասակարգային վորոշ կառուցվածք ունեն և վորոշ տերիտորիայ յեն զրավում, ՌՍՖՀՀ սահմաններում դոյություն ունեն նաև առանձին հոսուն ազգային խմբեր, ազգային փոքրամասնություններ, վորոնք ցրված են այլազգի կոմպակտ մեծամասնությունների մեջ և մեծ մասամբ չունեն վոչ վորոշ զասակարգային

կառուցվածք, վո՞չ ել վորոշ տերիառօրիա (լատիշները, եստոնացիները, լեհերը, էրեաները և ուրիշներ)։ Յարիզմի քաղաքականությունն այն է յեղել, վոր բոլոր միջոցներով, ընդհուպ մինչեւ ջարդերը (էրեական ջարդերը) ի չիք դարձնի այս փոքրամասնությունները։

Այժմ, յերբ աղղային արտոնությունները վոչնչացված են, աղկությունների հավասարությունը կենսագործված է, իսկ աղդային փոքրամասնությունների աղատ աղղային զարդացման իրավունքն ապահովված է խորհրդային հասարակակարգի հենց բնութով, կուսակցության խնդիրն աղղային այդ խմբերի աշխատավորական մասսաների վերաբերմամբ այն է, վոր ողնի նրանց՝ վակատար կերպով ողտադործելու նրանց համար ապահովիած աղատ զարդացման այս իրավունքը։

5. Կոմունիստական կազմակերպությունների գարդացումը ծայրամասերում ընթանում է փոքր ինչ յուրորինակ պայմաններում, վորոնք արդելակում են կուսակցության նորմալ աճումն այդ շրջաններում։ Մի կողմից, ծայրամասերում աշխատող վելիկուուս կոմունիստները, վոր «պետական» (державный) աղղի գոյության պայմաններում են մեծացել և աղղային ճնշում ասածքանը չեն խմացել, կուսակցական աշխատանքի մեջ հաճախ խիստ պակասեցնում են աղղային առանձնահատկությունների նշանակությունը, կամ թե չե՛ բնավ ել նրանց հետ հաշվի չեն նստում, իրենց աշխատանքի մեջ հաշվի չեն առնում տվյալ ժողովրդի դասակարգային կառուցվածքի, կուլտուրայի, կենցաղի, պատմական անցյալի առանձնահատկությունները, այսպիսով գոեհկացնելով ու խեղաթյուրելով կուսակցության քաղաքականությունն աղղային հարցում։ Այս հանդամանքի հետեանքը լինում է կոմունիզմից մեծապետականության, կոլոնիզատորության, մելիկուռասական շովինիզմի կողմը թեքվելը։ Մյուս կողմից, կոմունիստական տեղացիները, վորոնք ապրել են աղղային ճնշման ծանր շահականներից, հաճախ չափազանցնում են աղղային առանձնահատկությունների նշանակությունը կուսակցական աշխատանքում՝ ստվերի մեջ թողնելով աշխատավորության դասակարգային շահերը, կամ թե չե՛ տվյալ աղղի աշխատավորության շահերը պարզապես շփոթում են միևնույն աղղի «համազդային» շահերի հետ՝ չկարողանալով զատել առաջինները վերջիններից և սրանց վրա կառուցել կուսակցական աշխատան-

քը: Իր հերթին՝ այս հանգամանքը տանում է դեպի թեքում կոմունիզմից՝ բուրժուազեմոկրատական նացիոնալիզմի կողմը, նացիոնալիզմ, վորք յերբեմն ընդունում է պանխումիզմի, պանթյուրքիզմի ձև (Արևելքում):

Համագումարը վճռականորեն դատապարտելով այս յերկու թեքումն ել, վորպես կոմունիզմի համար վնասակար ու վտանգավոր թեքումներ՝ հարկավոր և համարում մտանանշել առաջին թեքման, —մեծասլետականության, կոլոնիզատորության կողմը կատարվող թեքման՝ առանձին վտանգավորությունն ու առանձին վնասակարությունը: Համագումարը հիշեցնում է, վոր առանց հաղթահարելու կոլոնիզատորական ու նացիոնալիստական մնացուկները կուսակցական շարքերում՝ ծայրամասերում անհնարին և ստեղծել ամրակուռ և մտասաների հետ կապված խոկապես կոմունիստական կաղմակերպություններ, վորոնք իրենց շարքերում ինտերնացիոնալիզմի հիմունքով համախմբում են տեղական և ուսու բնակչության պրոլետարական տարրերը: Ուստի և՝ համագումարը զանում է, վոր աղքայնական, առաջին հերթին կոլոնիզատորական տատանումների վերացումը կոմունիզմի մեջ, դա—կուսակցության կարևորագույն խնդիրներից մեկն և ծայրամասերում:

6. Մաղմաճակատներում ունեցած հաջողությունների կապակցությամբ և առանձնապես Վրանդելի լիկիդացիայից հետո, արդյունարմերական պրոլետարիատ չունեցող կամ դրեթե չունեցող միքանի հետամնաց ծայրամասերում ուժեղացել է քաղքենիական-նացիոնալիստական տարրերի կողմից կարիերայի համար հանդեռ ընդուղ ձգտումը դեպի կուսակցությունը: Այս տարրերը, հաշվի առնելով կուսակցության՝ վորպես փաստորեն կառավարող ուժի՝ դրությունը, սովորաբար կոմունիզմի գույնով ներկված և հաճախ ամրող խմբերով ձգտում են դեպի կուսակցություն՝ նրամեջ մտցնելով վատ քողարկված շովինիզմի ու քայլայման վողի, ընդմիռում ծայրամասերում ընդհանրապես թույլ յեղող կուսակցական կաղմակերպությունները վոչ միշտ են ի վիճակի լինում անդրդիմելի մնալ (ստօյտ): Կուսակցությունն ի հաշիվ նոր անդամների «ընդլայնելու» գայթակղության հանդես:

Կոչ անելով վճռականորեն պայքարելու պրոլետարիատի կուսակցության մեջ խցկվող ամեն տեսակի կեղծ-կոմունիստական տարրերի դեմ՝ համագումարը նախազդուշացնում է կուսակցությանը՝ ի հաշիվ քաղքենիական-նացիոնալիստական ինտելիզեն-

տական տարրերի «ընդլայնվելուց»։ Համազումարը դոնում է, վոր կուսակցության համալրումը ծայրամասերում պետք է կատարվի դիսավորապես ի հաշիվ այդ ծայրամասերի արողետարների, չքավորների և աշխատավոր դյուղացիների, միաժամանակ աշխատելով ամրացնել ծայրամասերի կուսակցական կազմակերպությունները նրանց վորակական կազմը բարելավելու միջոցով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ
(ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԹԵԶԻՍՆԵՐԸ ՌԿ(Պ)Կ X ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀԱ-
ՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԿ-Ի ԿՈՂՄԻՑ (1921 թ.)) 19

Проб. 4940

Թարգմ. Պ. Աբելյան

Wifp. —

Տեխն. լոմպ. Ա. Խաչատրյան

Պատ. սրբագրիչ Լ. Արուվյան

Գլավլիտի լիազոր Ի-9711, հրամ. № 473,
պատվեր № 147, տիրաժ 5000

Հանձնված ե արտադրության 25/VII 1937 թ.

Սառըադրիմ և տպագութեան 13/VIII 1937

Phi Beta Kappa

Հայկուսհրատի ապարան, Յերևան,
Ալավերդյան № 71



ԳԱԱ Հիմնարար գիտ. գրառ.



FL0021275

406

«644»
ԳՐԱԾ 43-4.

II
6947

И. СТАЛИН
ОЧЕРЕДНЫЕ ЗАДАЧИ
ПАРТИИ В НАЦИОНАЛЬНОМ
ВОПРОСЕ

Армпартиздат, Ереван, 1937